MAY 31 WORLD NO TOBACCO DAY

Մեր սիրելի Սերգեյ,

Մայիսի 31-ը ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում նշվում է որպես ծխախոտի դեմ պայքարի միջազգային օր:

AUA UNDERGRADUATE STUDENTS

SCHOOL OF Public Health

Ծխախոտի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ ցանկանում ենք Ձեզ ներկայացնել Երևանի մի շարք հանրային վայրերում, այդ թվում նաև Ձեր վաճառակետում իրականացված դիտարկման արդյունքները:

Ձեր վաճառակետը Ամերիկյան համալսարանի ուսանողների ամենասիրելի վայրերից է: Մեր սիրելի վայրի առավելություններն ընդգծելու նպատակով առաջարկում ենք՝

Վաճառակետի կիսաբաց հատվածը դարձնել չծխելու համար նախատեսված գոտի

Չծխելու վերաբերյալ նշաններ և նախազգուշացնող ցուցանակներ տեղադրել չծխելու համար նախատեսված հատվածում

Չծխելու համար նախատեսված հատվածում տեղադրել պաստառ «Այստեղ ծխելն արգելվում է» և/կամ «Ծխախոտի ծխից ազատ ապրելը մեր իրավունքն է» գրությամբ



Լիահույս ենք, որ ընդառաջ կգնաք Ձեր հավատարիմ հաճախորդների խնդրանքին և կիրականացնեք ներկայացված առաջարկությունները: Հայաստանի ամերիկյան համալսարանի Հանրային առողջապահության ֆակուլտետն, ինչպես նաև բակալավրիատի ուսանողներն իրենց պատրաստակամությունն են հայտնում աջակցել վերոնշյալ առաջարկությունների իրականացման գործընթացում:

Շնորհակալ ենք համագործակցության համար: Սիրով՝հավատարիմ հաճախորդներ: